Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

Մեծ Հայքի Մոկաց աշխարհի Մյուս Իշայր գավառում՝ Բաղեշ քաղաքից 35կմ հարավ-արևելքում է գտնվել Խիզան քաղաքը: Այն հաճախ հիշատակվել է XIV-XVդդ. ձեռագիր հիշատակարաններում՝ որպես հայկական գրչության կենտրոն: Խիզանից հայտնաբերվել է մի ձեռագիր (Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր 2865, 4բ, Պատմագիրք Հայոց), որի մանրանկարն[1], ըստ ընդունված կարծիքի, հետևյալ բովանդակությունն ունի: Պատմահայր Մովսես Խորենացին գրում է իր «Հայոց պատմութիւն»-ը, պատվիրատու Սահակ Բագրատունին ձեռքը մեկնել է դեպի պատմահայրը՝ հանձնարարական շարժումով, իսկ նրանց ոտքերի մոտ՝ հատակին, ծնկաչոք կեցվածքով ձեռագրի ստացող Ներսես Գնունեցին է (նկ. 1): Նկարի տակ ծանոթագրված է. «Սահակ Բագրատունին խնդալև Մովսես Խորենացւոյ բան»: Մանրանկարը համարվում է 1567թ. գործ, իսկ ծաղկողի անունը հայտնի չէ:

Նկ. 1

Ինչպես նշվեց, մանրանկարը համարվում է Խիզանի դպրոցի ստեղծագործություններից, սակայն, ամենայն հավանականությամբ, մանրանկարի հեղինակը Կիլիկիայի մանրանկարչական դպրոցի (կազմավորված XII դարում և գոյատևած մինչև XIV դարի 80-ական թթ.) ներկայացուցիչ է, քանի որ նկարը բավականին ցայտուն կերպով կրում է Կիլիկյան դպրոցի ազդեցությունը: Իսկ ինչ վերաբերում է մանրանկարի բովանդակությանը, ապա, մեր կարծիքով, այն չի համապատասխանում իր ներքոգրյալ ծանոթագրությանը և արտահայտում է բոլորովին այլ ժամանակաշրջան, միջավայր ու գործիչներ: Մեր կարծիքով, նկարում պատկերված թագակիր անձնավորությունը կարող էր լինել Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն II Մեծագործը (1198-1219թթ.), իսկ մյուս երկուսը՝ նրա ժամանակակիցները: Բերենք փաստարկներ:

1. Թագակիր անձնավորությունը Սահակ Բագրատունին լինել չէր կարող հետևյալ պատճառով: Սահակ Բագրատունին թագավոր չէր, իշխան էր, ապա՝ մարզպան (481-482թթ.) և չէր կարող կարմիր կոշիկներ ու թագ կրել, այն էլ՝

---

[1] *Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, Մատենադարան, Եր., 1982, նկ. N 63:*

կիլիկյան թագ (հմմտ. Լևոն II արքայի թագը՝ ըստ դրամի (նկ. 2, 3)[2], Լևոն III արքայի թագը (նկ. 4)[3], Լևոն V արքայի թագը (նկ. 5)[4]:

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

2. Կարծեցյալ Մովսես Խորենացու փոխարեն տվյալ պատկերում կարող էր հանդես գալ Ներսես Լամբրոնացին, ով իր կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել էր Լևոն II-ի արքունիքում որպես ատենադպիր, պալատական խորհրդատու և թարգմանիչ[5]:

---

[2] *Կատվարյան Մ., Լևոն Բ Մեծագործ. Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1978, էջ 589:*

[3] *Հայկական մանրանկարչություն. Դիմանկար. Լևոն Գ թագավոր. Կեռան թագուհի և նրանց որդիները նկ. N 13:*

Նույնի. Լևոն Ե թագավոր, նկ. N 35:

[4] *Արգարյան Գ., Գրիգորյան Գ., Ներսես Լամբրոնացի. Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ 8. Եր., 1982. էջ 253:*

3. Հանձին ձեռագրի պատվիրատուի՝ կարծեցյալ Ներսես Գնունեցու, պետք է մահմեդական գործչի տեսնել, քանի որ իր կրոնական պատկանելությանը համապատասխան, նա կրում է մահմեդական փաթթոց, իսկ իր ոտաբոբիկ ու ծնկաչոք կեցվածքով հուշում, որ իրենից վերև գտնվող երկու կերպարների հանդեպ ստորադաս վիճակում է:
4. Շինության աշտարակը և ներքին հարդարումը ևս բնորոշ են մահմեդական կառույցներին:
5. Մանրանկարի խորքում՝ պատվանդանի վրա դրված գիրքը, որը համարվում է Մովսես Խորենացու երկը, ամենայն հավանականությամբ, Ղուրանն է, որը մահմեդականի երդման արարողության կարևոր ատրիբուտներից մեկն էր՝ այս դեպքում մահմեդական գործչի հնազանդության ու հավատարմության երաշխիքը:

Իսկ կոնկրետ ի՞նչ իրադարձություն է արտացոլում մանրանկարը: Նրա պատմական հենքը կարելի է գտնել Լևոն II-ի և հարևան Իկոնիայի (Ռումի) սելջուկյան սուլթանության քաղաքական հարաբերությունների մեջ: Կիլիկյան Հայաստանի միջազգային հարաբերությունները Լևոն II-ի կառավարման տարիներին բավականին բարդ էին: Այդ տարիները համընկել էին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող խոշոր քաղաքական իրադարձություններին և արմատական փոփոխություններին: 1176թ. Միրիոկեֆալոնի ճակատամարտում Իկոնիայի սելջուկներից կրած ծանր պարտության հետևանքով Բյուզանդիան այլևս Կիլիկյան հայկական թագավորության հետ անմիջական սահման չուներ և զրկվել էր Արևելքում որևէ դերակատարություն ունենալու հնարավորությունից: Պատմության թատերաբեմից վերջնականապես հեռացել էին Կիլիկիայի երբեմնի ամենավտանգավոր ախոյանները՝ Սեբաստիայի և Մելիտենեի Դանիշմենդյան ամիրայությունները: Եգիպտոսի սուլթան Սալահեդդինի (1169-1193թթ.) հարվածների տակ գրեթե կործանման եզրին էին հասել Արևելամիջերկրածովյան խաչակրաց պետությունները: Ներքին զահակալական կռիվներից սաստիկ թուլացել էին Իկոնիայի և Հալեպի սուլթանությունները: Չնայած բարդությանն ու հաճախակի փոփոխականությանը ընդհանուր առմամբ Կիլիկիայի համար միջազգային այդ իրադրությունը բարենպաստ էր: Լևոն II-ը հմտորեն կարողացավ օգտվել դրանից, առավելագույնս ընդարձակեց իր պետության սահմանները և «ծավալապաշտությունը դարձրեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնաքարը»[1]: Լևոն Մեծագործը կապեր ուներ թե պապականության, թե Հռոմեական Սրբազան կայսրության և թե Բյուզանդիայի հետ: Միջազգային ասպարեզում շատ էր բարձրացել նրա անձնական հեղինակությունը: Երկրի շահերից բխող անկախ և ճկուն դիվանագիտության որդեգրումը, Կիլիկիայի տարածքների ընդարձակումն ու պաշտպանունակության ամրապնդումը, պետական համակարգի արդիականացմանը միտված բարեփոխումների իրականացումը ուղեկցվում էին երկրի բնակչության ստվարացումով, նրա տնտեսական վերելքով, քաղաքների և արտաքին առևտրի զարգացումով: Այս գործոնների շնորհիվ Կիլիկյան հայոց պետությունն այնքան հզորա-

[1] *Տեր-Պետրոսյան Լ., Բաղակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 231:*

ցավ, որ դարձել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, և դրա ազդեցությունը շարունակաբար զգացվեց թագավորության հետագա ողջ գոյության ընթացքում:[7]

Լևոն II-ը դեպի արևելք պետության տարածքն ընդլայնել էր ի հաշիվ Անտիոքի իշխանության[8]: Նա դիվանագիտական ճկունություն ու խոհեմություն էր ցուցաբերել նաև Իկոնիայի սուլթան Խլիճ-Արսլան II-ի (1156-1192թթ.) որդիների միջև ծագած գժտության ժամանակ: Նա արշավել էր արևմուտք և հյուսիս, գրավել Իսավրիայի և Կապադովկիայի սահմանամերձ շրջանները: Իկոնիայի սուլթան Խլիճ-Արսլանը դեռևս կենդանության օրոք էր իր պետությունը բաժանել որդիների միջև, ինչը թուլացրել էր Փոքր Ասիայի սելջուկների ռազմական հզորությունը և կասեցրել նրանց արշավանքները Կիլիկյան Հայաստան: Այժմ Լևոնն ինքն էր արդեն հաջող պատերազմներ մղում սելջուկ-թուրքերի դեմ, ուստի Խլիճ-Արսլանի՝ միմյանց դեմ մարտնչող որդիներին այլ բան չէր մնում, քան ապավինել նրա հովանավորությանը: 1195թ. նրանցից Մուղիս էդ-դին Տողրուլշահը՝ Մալիքը (Ալբիստանի էմիրը 1192-1201թթ.), գալիս է Լևոնի մոտ, ընդունում նրա գերիշխանությունը և իրեն կախյալ հայտարարում նրանից:[9] Լևոնն իր հերթին փայլուն կերպով իրականացնում է իր խոստումը. նա արշավում է Մալիքի եղբոր՝ Կեսարիայի տեր Նուր էդ-դին Սուլթանշահի դեմ, հաղթանակ տանում նրա նկատմամբ, գրավում անգամ Կեսարիայի հարևան մի բնակավայր: «Արիացոյնն Լևոն տիրեաց եւթանասուն և երկու բերդի, էր զոր նախնիքն իւր կալեալ էին և էր զոր ինքն էառ ի յունաց և ի թուրքաց... Եւ ել մեծն Լևոն և էառ բերդ մի մերձ Կեսարիոյ և ետ նմա» մելիքին՝ Ալպիստանի տիրոջը:[10]

Ցավոք, աղբյուրները լռում են Լևոնի և Մուղիս էդ-դինի միջև կնքված որևէ գրավոր համաձայնագրի առկայության մասին, սակայն դժվար չէ կռահելը, որ այդպիսին եղել է. ռազմական օգնության դիմաց գերիշխանության ճանաչումը և փոխադարձ պարտավորությունները պետք է որ ամրագրվեին պայմանագրով:

Հետագայում ևս՝ թագավոր օծվելուց հետո, Լևոն II-ին տեսնում ենք Իկոնիայի սուլթանության այս կամ այն թագաժառանգին իր քաղաքական աջակցությունը ցուցաբերելիս,[11] սակայն դրանք ավելի շուտ դրվագային միջամտու-

---

[7] *Կիրակոս Գանձակեցի*, *Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, գլ. Գ, էջ 118:* ***Միքայելյան Գ.***, *Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 178 (****Միքայել Ասորի****, Ժամանակագրութիւն, էջ 501): Նույնի, էջ 178-179 (Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, էջ 182):* ***Օրմանեան Մ.***, *Ազգապատում, հ. Ա, Պէյրութ, 1959, էջ 722:*

[8] ***Միքայելյան Գ.***, *Կիլիկիայի հայկական պետության պատմություն, էջ 144:*

[9] ***Տեր-Պետրոսյան Լ.***, *նշվ. աշխ., հ. Բ, էջ 234 (տե՛ս* ***Սմբատ***, *Տարեգիրք, Վենետիկ. 1956, էջ 212):*

[10] ***Միքայելյան Գ.***, *նշվ. աշխ., էջ 155 (Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն, էջ 501-502):*

[11] *Գիյաս էդ-դին Քեյ Խոսրովի և եղբոր՝ Ռուքն էդ-դինի միջև ընթացող հակամարտության ժամանակ Լևոն II-ն աջակցում էր Ռուքն էդ-դինին (տե՛ս* ***Հովհաննիսյան Ա.***, *Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., Էջմիածնի հանդես, 2012, էջ 86); Սուլթան Գիյաս էդ-դին Քեյ Խոսրովի (1205-1210թթ.) որդիներ Իզզ էդ-դինի ու Ալա էդ-դինի՝ գահի համար մղված պայքարի ժամանակ Լևոնն օգնում էր Ալա էդ-դինին: Սակայն Իզզ էդ-դինը ոմն Ջելալ էդ-դինի միջնորդությամբ*

թյուններ էին, և կարծես թե կախյալ ճանաչվելու կամ գերիշխանություն ընդունելու խնդիր որևէ մեկի առջև Լևոնը չէր դրել: Ի նկատի առնենք, որ սկսած XIII դարասկզբից Իկոնիայի սուլթանությունը վերականգնել էր նախկին հզորությունը և իր հերթին աջակցում էր Անտիոքի դքսությանն ու Հալեպի սուլթանությանը՝ ընդդեմ Կիլիկիայի, ուստի միջազգային իրավիճակը մերձավորարևելյան տարածաշրջանում կտրուկ փոխվել էր՝ հօգուտ Կիլիկյան Հայաստանի հակառակորդների:[12] 1216թ. սելջուկյան զորքերն անգամ ներխուժել էին Կիլիկիա, նրանց հաջողվել էր մի քանի օրվա ընթացքում կողոպտել սահմանամերձ շրջանները, գերեվարել մարդկանց, տիրանալ մեծ թվով անասունների ու նշանակալի ավարի: Լևոն II-ը հիվանդության պատճառով չէր մասնակցել ռազմական գործողություններին:[13] Ըստ Սմբատ սպարապետի 1216թ. սելջուկների հետ բախումներն ավարտվել էին հայերի պարտությամբ, որի պատճառներից մեկը ժամանակագիրը համարում է թշնամու գերակշռությունը, իսկ մյուսը՝ Լևոնին ենթակա որոշ իշխանների անտարբերությունն ու անհավատարմությունը[14]: 1218թ.[15] կնքված հաշտության պայմանագրով Լևոն II-ը գերիներին ազատում է՝ տարածքային զիջումների և սուլթանի գերակայությունը ճանաչելու պայմանով: Կարծիք կա նաև, թե Լևոնը գերյալ իշխաններին ազատել է ոչ թե զիջումների գնով, այլ ուժի ցուցադրությամբ[16]: Այնուամենայնիվ, սելջուկ-թուրքերի՝ Կիլիկիայի դեմ ունեցած ռազմական հաջողությունները վկայում են, որ Լևոն II-ը կորցրել էր նրանց նկատմամբ նախկինում ունեցած իր ազդեցությունն ու հեղինակությունը, ուստի «իր գահակալման վերջին տարիներին ստիպված էր զգալի զիջումներ կատարել հարևան Իկոնիայի սուլթանությանը»:[17] Հետևաբար, մանրանկարում արտացոլված դրվագը կարող է վերաբերել Լևոն Մեծագործի կառավարման այն ժամանակահատվածին, երբ Կիլիկյան Հայաստանը նա դարձրել էր Միջերկրական ծովի արևելյան ափի ուժեղ պետություններից մեկը, իսկ Իկոնիայի սուլթանությունը գտնվում էր թուլացած ու պառակտված վիճակում:

Նկարագրված իրադարձությունները կարծես ամրապնդում են մեր այն կարծիքը, թե մանրանկարում պատկերված ծնկաչոք անձնավորությունը բարձրաստիճան մահմեդական է և ստորադաս վիճակում է գտնվում Լևոն Մեծագործի հանդեպ: Նրա ոտաբոբիկ ու ծնկաչոք դիրքը շեշտում է թագակիր անձնավորու-

---

կարողանում է առանձին դաշինք կնքել Լևոնի հետ և չեզոքացնել նրանից եկող վտանգը (տե՛ս Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 172):

Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 85:

Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 173:

Նույնի, էջ 175 (Սմբատայ Սպարապետի պատմութիւն, էջ 107-108):

Հովհաննիսյան Ա., Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սելջուկյան սուլթանության միջև 1918թ. կնքված հաշտության պայմանագրի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Միջազգային հարաբերություններ. Քաղաքագիտություն», Եր., 2010, էջ 73:

Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 275-276 (Վահրամ Ռաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 216; Հեթում արքայորդի, ճաշոց, էջ 586-587):

Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության հարաբերությունները 1198-1219թթ., էջ 93:

թյունից՝ տվյալ դեպքում Լևոն II-ից, կախման մեջ գտնվելու և հնազանդ լինելու մասին: Հնարավոր է, որ պատկերվածը Խլիճ-Արսլանի որդի Մուղիս էդ-դին Տողրուլշահն է, քանի որ, ինչպես տեսանք, Մուղիս էդ-դինն էր ռազմական աջակցության դիմաց իրեն կախյալ հայտարարել Լևոնից, բացի դրանից, Լևոնը Մուղիս էդ-դին - Նուր էդ-դին հակամարտության տարիներին ավելի ուժեղ էր, ինքնուրույն ու անկախ: Այդ տարիներին նրա մղած պատերազմները սելջուկների դեմ կրում էին հարձակողական ու նվաճողական բնույթ, երբ սելջուկ-թուրքական հետագա գահակալական պայքարների ընթացքում, ինչպես վերևում նշվեց, Լևոնն այլևս նախկին ազդեցիկ դիրքը չուներ տարածաշրջանում, նրա մղած պատերազմները սելջուկների դեմ արդեն պաշտպանողական բնույթ էին կրում և անգամ ուղեկցվում տարածքային զիջումներով:

Եթե ընդունենք, որ խնդրո առարկա մանրանկարում լուսապսակով պատկերված անձնավորությունը Ներսես Լամբրոնացին է, ապա անվիճելի կլինի այն փաստը, որ Լևոն II-ի հանդեպ պարտավորություններ ստանձնած բարձրաստիճան մահմեդականը Մուղիս էդ-դին Տողրուլշահն (Մալիք) է: Խլիճ-Արսլանի որդիների գժտությունն ու Լևոն Մեծագործի միջամտությունն այդ առճակատմանը տեղի է ունեցել 1195 թ.[18], երբ Ներսես Լամբրոնացին տակավին ողջ էր: Նա Լևոնի արքունիքի ատենադպիրն էր և առանց նրա մասնակցության դժվար թե կայանար Մուղիս էդ-դին Տողրուլշահին վասալ ճանաչելու պայմանագիր-պարտավորագրի կնքման արարողությունը: Լամբրոնացին կնքել էր իր մահկանացուն 1198թ. հուլիս ամսին՝ Լևոնի թագադրությունից (1198թ. հունվարի 6) ամիսներ անց, այսինքն չէր կարող ներկա լինել հետագա որևէ դիվանագիտական բանակցության:[19] Իսկ այժմ փորձենք պարզաբանել, թե ինչու էր Ներսես Լամբրոնացին մանրանկարում լուսապսակով հանդես գալիս:

1. Հայկական եկեղեցիներում սովորույթ է եղել սրբերի շարքում պատկերել նաև կաթողիկոսներին:[20] Ճիշտ է, Լամբրոնացին կաթողիկոս չէր և 1175թ.-ից Տարսոնի եպիսկոպոսն էր, սակայն այնպիսի հռչակ էր վայելում երկրում, որ յուրաքանչյուր պետական կարևոր նշանակության հարց առանց նրա մասնակցության չէր լուծվում: Այս առթիվ Մ. Օրմանյանը գրում է. «Ապիրատէն (1194-1203թթ. կաթողիկոսական աթոռը զբաղեցրած Գրիգոր Զ Ապիրատ-Լ.Պ.) աւելի ժիր եւ գործունեայ էր իր քեռորդին Ներսես Լամբրոնացի Տարսոնի արքեպիսկոպոսը, տակաւին հազիւ քառասուն տարեկան, որուն ամէն եկեղեցական և

---

[18] *Այստեղ կարող է հարց ծագել՝ եթե Լևոն Մեծի միջամտությունը երկու եղբայրների հակամարտություններ տեղի է ունեցել մինչև Լևոնի թագադրվելը, ապա ինչու՝ է վերջինս մանրանկարում թագով պատկերված: Ենթադրելի է, որ մանրանկարն ստեղծվել է հետագայում, հետևաբար ով էլ որ լիներ հեղինակը, չէր կարող մեր հռչակավոր թագավորին առանց թագի պատկերել:*

[19] *Կարծիք կա նաև, թե Լամբրոնացին փախանվել էր Լևոնի թագադրման արարողությունից առաջ, և, ըստ այդմ, Լևոնի՝ թագավոր հռչակվելը դրվում է 1199թ. հունվարի 6-ին՝ հիմք ընդունելով թագադրման հանդեսին ներկա գտնված և հանվանէ հիշատակված 14 եպիսկոպոսների շարքում Ներսես Լամբրոնացու անվան բացակայության փաստը (Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 802-804:)*

[20] *Հայկական մանրանկարչություն. Դիմանկար, էջ 6:*

քաղաքական գործերու մէջ առաջնակարգ դեր վարելը տեսանք, եւ որ Լեւոնի գլխաւոր խորհրդակիցն ու գործակիցն էր, եւ որուն ընտրելիութիւնն (կաթողիկոսական ընտրություն-Լ.Պ.) ալ խօսուէր»:[21] Այսպիսով, կաթողիկոս Գրիգոր Ապիրատը ստվերում էր մնացել, ինչպես Օրմանյանն է նկատում, իր մեղմ ու վարանոտ բնավորության պատճառով:[22] Գրիգոր Զ Ապիրատին հաջորդած Հովհաննես Զ Սսեցին (1203-1221թթ.) ևս որոշիչ դեր չի կատարել Կիլիկյան Հայաստանի քաղաքական կյանքում:

2. Ներսես Լամբրոնացին նաև մատենագիր է եղել, գիտնական, փիլիսոփա, հրապարակախոս, բանաստեղծ, երաժիշտ, թարգմանիչ, տիրապետել մի քանի օտար լեզուների (հունարեն, լատիներեն, ասորերեն, եբրայերեն, ղպտերեն): «Նա ամէնէն աւելի ոգւով փարած է բոլոր եկեղեցիները միացնելու բարձր՝ բայց անգործադրելի խորհուրդին»:[23] Լամբրոնացուն վստահված է եղել նաև երկրի արտաքին գործերը վարելու ու կարգավորելու պարտավորությունները, որոնց համար նա բազմիցս է ուղարկվել օտար երկրներ: Լևոնի թագադրման շուրջ բանակցություններ վարելու համար Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանությունը նույնպես Լամբրոնացին էր գլխավորել[24]:

3. Լամբրոնացու հայրը Լամբրոնի ազդեցիկ իշխանական տոհմի ներկայացուցիչ էր, որից ժառանգած նյութական միջոցներով Ներսես Լամբրոնացին օժանդակել է դպրոցներին, գրադարաններին, գրչատներին, ձեռագրերի գնմանը, ընդօրինակմանը, վանքերի, եկեղեցիների ու այլ շենքերի կառուցմանը, հասարակական այլ կարիքների[25]:

Անկասկած, նման բեղմնավոր գործունեություն ծավալած պետական ու եկեղեցական ակնառու գործիչն իր ժամանակակիցների կողմից պետք է, որ ընկալվեր և ընկալվել է որպես Սուրբ: Ինչպես հայտնի է, Ներսես Լամբրոնացուն մեծարել են «Տիեզերական վարդապետ», «Սիրելի», «Սուրբ» մակդիրներով:[26] Ավելին, Լամբրոնացին ժամանակին Կոստանդնուպոլսում դասվել է տոնելի սրբերի շարքը:[27] Հույներն ու հռոմեացիները կոչել են նրան երկրորդ Պողոս առաքյալ Տարսոնացի:[28] Հայ եկեղեցին Ներսես Շնորհալու հ նրա անվանակից ու աջակից Ներսես Լամբրոնացու հիշատակներին տոն է սահմանել,որը կոչվել է «Ներսիսյանց»:[29]

Այժմ պարզաբանենք, թե ինչու մանրանկարի տակ բերված ծանոթագրությունը չի համապատասխանում մանրանկարում պատկերված իրողությանը: Ըստ երևույթին, գրությունն արված է ոչ թե մանրանկարչի կողմից, այլ ավելի ուշ՝

---

[21] *Օրմանյան, նշվ. աշխ., էջ 776-777:*
[22] *Նույն տեղում, էջ 809:*
[23] *Նույն տեղում, էջ 802:*
[24] *Միքայելյան Գ., նշվ. աշխ., էջ 157:*
[25] *Արգարյան Գ., Գրիգորյան Գ., Ներսես Լամբրոնացի. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, էջ 253:*
[26] *Նույն տեղում, էջ 254:*
[27] *Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 802:*
[28] *Հայոց եկեղեցու սրբերը և սրբակենցաղ անձինք. կազմեց Ռ.Մաթևոսյանը. Ս.Էջմիածին, 1999, էջ 188:*
[29] *Նույնը:*

հետազայի միջամտություն է, որը կատարված է ոչ այնքան բանիմաց ու զրագետ անձնավորության կողմից: Դրա վկայությունն են տառերի անհամաչափությունը և զրվածքի՝ նկարի հանդեպ ոչ սիմետրիկ տեղադրությունը: Գրությունը կատարյալ ու անթերի կլիներ, եթե զրված լիներ նման տաղանդավոր վարպետի կողմից, ինչպիսին է մանրանկարի հեղինակը, որի գործն ինքնին բարձր արվեստի նմուշ է:

Այսպիսով, ամբողջացնելով պատկերը, կարելի է եզրակացնել, որ մանրանկարը հեղինակել է կիլիկյան մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ, ով քաջատեղյակ է եղել Լևոն Մեծագործի իշխանության տարիներին երկրում տեղի ունեցած քաղաքական, ռազմական, եկեղեցական ու դիվանագիտական անցուդարձին և դրանցից մի դրվագ վավերացրել իր ձեռքի աշխատանքում, որտեղ պատկերված են ոչ թե Մովսես Խորենացին՝ «Հայոց պատմութիւն»-ը զրելիս, պատվիրատու Սահակ Բագրատունին և ձեռագրի ստացող Ներսես Գնունեցին, այլ, ըստ երևույթին, Լևոն Մեծագործն ու Ներսես Լամբրոնացին, իսկ նրանց ոտքերի տակ՝ ծնկաչոք կեցվածքով Լևոն Մեծագործի օգնությանը դիմած և գերիշխանությունն ընդունած Իկոնիայի սուլթան Խլիճ-Արսլանի որդի Մուղիս էդդին Տողրուլշահը, ով, Ղուրանի առջև երդվելով, իր հպատակությունն է հայտնել Լևոն Մեծագործին:

ПОПЫТКА НОВОЙ ИНТЕРПРЕТАЦИИ ОДНОЙ МИНИАТЮРЫ

Резюме *Л. Петросян*

В городе Хизан (губерния Мокк) была найдена рукопись, миниатюра которой, согласно принятому мнению, изображает родоначальника армянской историографии Мовсеса Хоренаци во время работы над книгой "История Армении". Напротив Хоренаци сидят якобы марзпан Армении (181-182гг.), заказчик произведения Саак Багратуни, а под ногами Хоренаци и Саака Багратуни, на коленях стоит получатель рукописи Нерсес Гнунеци.

Видимо, такое содержание миниатюре приписано по недоразумению, потому что присутсвующие в нем образы с киликийской царской короной и мусульманской чалмой, как и вообще, миниатюра в целом, нас переносят совсем в другую среду и эпоху. По нашему мнению, миниатюра отображает подписание соглашения, которое состоялось между Киликийским царем Левоном II (1198-1219гг.) и владельцем Альбистана Мутис эд-дин Тогрулшахом (1192-12012гг.), одного из престолонаследников Иконийского султаната. Последний поссорился со своим братом, прибыл к Левону и поставил себя в зависимость от него. Взаимные обязанности, по-видимому, записывал выдающийся деятель своего времени Нерсес Ламбронаци.

Տեղեկություններ հեղինակի մասին

Պետրոսյան Լուսինե Մարգսի – պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն.

ԳՊՄԻ պատմության և իրավագիտության ամբիոն.

E-mail: Vahe1996@mail.ru